ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2026 թվականի N 1133 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1959-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 12-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՔԱՐԱԿԵՐՏԻ ՔԱՐԱՁՈՒԼՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1959-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) տեխնոլոգիական սարքավորումներ, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասեր ցանկի 16-րդ կետի «Անվանումը» սյունակում «Մետաղամշակման բազմադիրք ագրեգատային հաստոց՝ թվային ծրագրային կառավարմամբ, նախատեսված բետոնի ամրաններն ակոսատող սարքերի գլանների պատրաստման համար,

արտադրող jiangsu dingshun heavy duty machine tool co.,ltd , մոդել: xk500g» բառերը փոխարինել «Խառատային ավտոմատ հաստոց՝ հորիզոնական, թվային ծրագրային կառավարմամբ, նախատեսված մետաղական ամրանների, գլանաձև ձողերի վրա ակոսների, ատամների, ռելիեֆային ելուստների և այլ պրոֆիլային ձևերի ստացման համար: jiangsu dingshun heavy duty machine tool co., ltd., model xk500g, serial number 25101310» բառերով.

2) տեխնոլոգիական սարքավորումներ, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասեր ցանկի 16-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակում «Գլանափաթեթի ակոսի չափը: տրամագիծը՝ 5մմ~50 մմ, գլանափաթեթի չափի տրամագծի միջակայքը՝ 100մմ~500մմ, աշխատանքային մասի առավելագույն երկարությունը 2500մմ, աշխատանքային մասի առավելագույն քաշը 3 տոննա, թվային ծրագրային կառավարման ծրագիրը՝ ավտոմատ ծրագրավորում, թվային ծրագրային կառավարման համակարգը՝ siemens չորսառանցքանի nc համակարգ, սերվո շարժիչ, հզորությունը 12 kw» բառերը փոխարինել «Խառատային ավտոմատ հաստոց՝ հորիզոնական, թվային ծրագրային կառավարմամբ, նախատեսված մետաղական ամրանների, գլանաձև ձողերի վրա ակոսների, ատամների, ռելիեֆային ելուստների և այլ պրոֆիլային ձևերի ստացման համար: jiangsu dingshun heavy duty machine tool co., ltd., model xk500g, serial number 25101310՝» բառերով.

3) տեխնոլոգիական սարքավորումներ, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասեր ցանկի 17-րդ կետի «Անվանումը» սյունակում «Հորիզոնական խառատային հաստոց թվային ծրագրային կառավարմամբ» բառերը փոխարինել «Binns &berry անվանմամբ data 90x3000 մոդելի հորիզոնական խառատային հաստոց թվային ծրագրային կառավարմամբ, օգտագործված, ըստ թիվ 03902501 առ 04.12.2025 թ. փորձագետի եզրակացության (օտարումն առանց ՀՀ ՊԵԿ-ի թույլտվության արգելվում է մինչև 04.12.2028 թ.)» բառերով.

4) տեխնոլոգիական սարքավորումներ, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասեր ցանկի 17-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակում «binns &berry անվանմամբ data 90x3000 մոդելի հորիզոնական խառատային հաստոց թվային ծրագրային կառավարմամբ» բառերը փոխարինել «Binns &berry անվանմամբ data

90x3000 մոդելի հորիզոնական խառատային հաստոց թվային ծրագրային կառավարմամբ, օգտագործված, ըստ թիվ 03902501 առ 04.12.2025 թ. փորձագետի եզրակացության (օտարումն առանց ՀՀ ՊԵԿ-ի թույլտվության արգելվում է մինչև 04.12.2028 թ.)» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

06.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ